

« ԿԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ »

Կ Ե Ր Ա Ք Ն Ն Ի Չ Բ Ո Ղ Ո Ք

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի ապրիլի 8-ի
թիվ ԼԴ/0017/11/09 որոշման դեմ :

2010 թվականի ապրիլի 8-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը քննության առնելով «Չելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանածորի գրասենյակ » հասարակական կազմակերպության նախագահի դիմումը՝ ընդդեմ Լոռու մարզի դատախազության՝ քրեական գործ հարուցելու կամ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու պահանջի մասին որոշել է բավարարել այն և պարտավորեցրել Լոռու մարզի դատախազին քննիչ Վ.Դոլմազյանի կողմից պաշտոնեական դիրքի չարաշահման մասին 2009 թվականի օգոստոսի 29-ին ներկայացված հաղորդման վերաբերյալ կայացնել համապատասխան որոշում որոշման օրինակը տրամադրելով հիշյալ կազմակերպությանը:

Գործի դատավարական նախաատմությունը .

2009 թվականի օգոստոսի 13-ին ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնում քննվող Վիոլյա Արշակունու վերաբերյալ քրեական գործով նույն բաժնի քննիչ Վ.Դոլմազյանը Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումների հիման վրա խուզարկություններ է կատարել Վանածոր քաղաքի բնակիչներ Շուշանիկ Սարգսյանի և Չեղինե Սաքանյանի բնակարաններում :

Նույն թվականի օգոստոսի 29-ին Լոռու մարզի ՇՊԱԿ համակարգող Ա.Սաքունցը քննիչի վերոհիշյալ գործողությունները գտնելով ապօրինի և այն գնահատելով որպես պաշտոնեական դիրքի չարաշահում քննիչ Վ.Դոլմազյանին քրեական պատասխանատվության ենթարկելու համար դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ իր հիշյալ հաղորդումը վերնագրելով որպես « Հաղորդում հանցագործության կատարման մասին», որը նույն ժամանակ ուղարկվել է Լոռու մարզի դատախազի քննարկմանը:

Լոռու մարզի դատախազը ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում քննարկելով վերոհիշյալ հաղորդումը և գտնելով, որ այն անհիմն է, չի պարունակում հանցագործության մասին հաղորդում 2009 թվականի սեպտեմբերի 18-ին թիվ Դ-458-09 գրությամբ այդ մասին հայտնել է Լոռու մարզի ՇՊԱԿ համակարգողին:

2009 թվականի նոյեմբերի 16-ին Ա.Սաքունցը դիմում է ներկայացրել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան խնդրելով պարտավորեցնել Լոռու մարզի դատախազությանը իր վերոհիշյալ հաղորդման վերաբերյալ կայացնել որոշում և որոշման օրինակը տրամադրել կազմակերպությանը:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը 2009 թվականի դեկտեմբերի 29-ի որոշմամբ մերժել է դիմումը պատճառաբանելով, որ ՀՀ քր. օր-ի 103 և 290 հոդվածների համաձայն դիմումատուն պարտավոր էր Լոռու մարզի դատախազի գործողությունը նախ քողոքարկել վերադաս դատախազին, որը չի կատարել, ապա նոր

միայն դատական կարգով:

2010 թվականի հունվարի 18-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի հիշատակված որոշումը «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը բողոքարկել է ՀՀ Վերաքննիչ դատարան, որը նույն թվականի փետրվարի 9-ի որոշմամբ բեկանել է առաջին ատյանի դատարանի որոշումը և այն ուղարկել նոր քննության:

Նույն թվականի ապրիլի 8-ին Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը որոշել է բավարարել այն և պարտավորեցնել Լոռու մարզի դատախազին քննիչ Վ.Դումազյանի կողմից պաշտոնեական դիրքի չարաչափման մասին 2009 թվականի օգոստոսի 29-ին հաղորդման վերաբերյալ կայացնել համապատասխան որոշում և որոշման օրինակը տրամադրել կազմակերպությանը:

Վերաքննիչ բողոքի հիմնավորումները.

«Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն պետական պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են «Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Մարզի դատախազը իրականացնելով «Սահմանադրության 103 հոդվածով դատախազությանը վերապահված լիազորությունները միայն իրավասու է հարուցել քրեական հետապնդում, հսկողություն իրականացնել հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ, դատարանում պաշտպանել մեղադրանքը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցել դատարան, բողոքարկել դատարանների վճիռները, դատավճիռները ու որոշումները, ինչպես նաև հսկողություն իրականացնել պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

Դատախազի լիազորությունները սահմանող ՀՀ քր. դատ. օր-ի 53 հոդվածը մինչդեռ պարույթի ընթացքում դատախազին թույլատրում է միայն իր նախաձեռնությամբ կամ դատարանի միջնորդության հիման վրա կայացնելու քրեական գործ հարուցելու, քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննական մարմնի և քննիչի որոշումը վերացնելու, քրեական գործը կարժելու կամ կասեցնելու քննիչի որոշումը վերացնելու, հետաքննական մարմնի, քննիչի կամ ստորադաս դատախազի դեմ բերված բողոքը կամ բացարկը բավարարելու կամ մերժելու մասին որոշում:

Գործող օրենսդրությամբ հաղորդումների կապակցությամբ նյութեր նախապատրաստելու, բազառությամբ պետական շահերի պաշտպանության նկատառումներով հայցեր հարուցելու համար, և հետևաբար քրեական գործի հարուցումը մերժելու կամ հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին որոշում կայացնելու լիազորություն դատախազին չի վերապահված:

«ՀՀ քրեադատավարական օրենքի համաձայն քրեական գործ հարուցելը մերժելը և այդ կապակցությամբ համապատասխան որոշում կայացնելը հանդիսանում է բազառապես քննիչի լիազորություն, իսկ նույն օրենքի համաձայն պետական հատուկ ծառայություն իրականացնող անձ հանդիսացող ոստիկանության մարմինների պաշտոնատար անձանց վերաբերյալ քրեական վարույթն իրականացնելը և հետևաբար նրանց նկատմամբ նյութեր նախապատրաստելը և որոշում կայացնելը վերապահված է հատուկ մարմնի քննիչներին, որոնց գործունեության նկատմամբ էլ մարզի դատախազը հսկողություն կամ դատավարական ղեկավարում չի իրականացնում:

Այդ առումով էլ ՀՀ քր. դատ. օր-ի 181 հոդվածը դատախազին չի լիազորել հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման արդյունքում կայացնելու հիշատակված որոշումներից մեկը:

Դատարանը դատախազին պարտավորեցրել է կայացնել համապատասխան որո -

չում, որը ըստ վերջինիս լիազորությունների իրավասու է կայացնելու միայն քրեական գործ հարուցելու մասին որոշում, անուղղակի ձևով հաստատել է քննիչի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաչափելու հանգամանքը:

Հակառակ դեպքում դատարանը իր հիշյալ որոշմամբ պարտավորեցրել է դատախազին կատարելու այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են գալիս նրա լիազորությունների շրջանակից և դրանով կարող է էական վնաս պատճառել անտույան օրինական շահերին:

Միաժամանակ «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության յուրովի որակված հաղորդումը չի կարելի միանշանակ որակել որպես հանցագործության մասին հաղորդում:

Վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հիմնավորումները

ՀՀ քր. դատ. օր-ի 380¹ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն վերաքննիչ բողոք քերելու հիմք է դատական սխալը՝ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող է ազդել գործի ելքի վրա: Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ, ճիշտ չեն մեկնաբանվել ու գնահատվել դատախազին օրենքով վերապահված լիազորությունները, գործի փաստական հանգամանքները և կայացվել է անօրինական և անհիմն դատական ակտ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 381 հոդվածով

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Վերաքննիչ բողոքը ընդունել վարույթ, բեկանել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2010 թվականի ապրիլի 8-ի Հ-ԼԴ/0017/11/09 դատական ակտը:

Լոռու մարզի դատախազության
դատախազ, առաջին դասի
խորհրդական


Վ.ՍՏԵՓՈՒՅԱՆ